

## ՄԵԾ ՊԱՀՔԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

*«Միթե կարելի՞ քան է, որ հարսանքավորները սուգ պահեն, քանի փեսան նրանց հետ է» (Մատթ. 9:15):*

Մեր Տերը այս հարցը ուղղեց նրանց, որոնք չէին հասկացել պահքի բուն նպատակը: Նրանք չգիտեին, որ Հիսուսի աշակերտները ունեին մի ուրիշ կերակուր, որն ամեն օր ձաշակում էին Նրա բերանից բխող օրհնաբեր խոսքով և անմիջականորեն վայելում նույն-ինքն Աստծուն: Հեռաբար, կարիք կա՞ր մաքրվելու և մոտենալու Աստծուն, երբ Նա Ինքն էր մոտեցել մարդկանց:

Մեր Տերը մեզ հետ չէ այսօր, սակայն մարդիկ զգո՞ւմ են արդ-յոք Նրա ներկայությունը իրենց մեջ, եթե այդպես է, ապա ինչո՞ւ են շարունակվում զանազան տեսակի մեղքերի շարանները. ռիբ, ատե-լությունը, նախանձը, վիճաբանությունները և այլն: Տերը մեր կողքին է, բայց մենք մերժում ու հեռացնում ենք Նրան մեզանից, ինչպես Անառակ Որդին, բայց երբ անդրադառնանք և ցանկանանք վերադառ-նալ, կարիքը պիտի ունենանք մի կողմ դնելու աշխարհային մտահո-գությունները, որոնք խճողել են մեր մտքերն ու հոգիները. կարիքը պիտի ունենանք վերանորոգվելու, մտածելու և մեր ներաշխարհում ամփոփվելու ու լռության մեջ լսելու Տիրոջ ձայնը: Այս՝ է իսկական պահքը: Աստված ուզում է, որ մենք իբրև Իր հարսզատա զավակները մշտապես ուրախ լինենք, բայց մյուս կողմից էլ ընդունում է զոջումի և անդրադարձի համար մեր թափած արցունքները նրանք նկատելով որպես մերժման բողոքներ մեր կատարած սխալների ու մեղանչում-ների դեմ, խոնարհվում է, մխիթարում ու հույս է տալիս մեզ:

Պահքի կարևորությունը շեշտելով և բուն իմաստն ու բովան-դակությունը բացատրելով Ավետարանիչը նկարագրում է, թե Հով-հաննես Մկրտչի աշակերտներին տարօրինակ էր թվում այն հանգա-մանքը, որ Հիսուս Իր առաքյալներին և հեռերդներին չէր ստիպում պահք պահել, ինչպես իրենց ուսուցիչն էր անում: Հիսուս նրանց պատասխանում է. *«Միթե կարելի՞ քան է, որ հարսանքավորները սուգ պա-հեն, քանի փեսան նրանց հետ է, բայց կգան օրեր, երբ փեսան նրանցից կվերցվի, և ապա ծով կպահեն»:*

Սրանով մեծ Վարդապետը հստակ ցույց էր տալիս, որ պահքը, ծովը, աղոթքը միջոցներ են և ոչ թե նպատակ: Իրական նպատակը Աստծուն մոտ լինելն ու Նրա ներկայությունը զգալն է: Եկեղեցին, հավատարիմ Քրիստոսի խոսքին, խրատում է մեզ երեք բան անել - *աղոթել, պահեցողություն անել և ողորմություն տալ:*

**Աղոթքը** մեզ մոտեցնում է Արարչին, **պահեցողությունը** մարմնական սննդից ավելի շեշտում է **հոգևոր սննդի կարևորությունը**, իսկ **ողորմա-ծությունը** առիթ է տալիս մեզ մեր ունեցածը բաժանելու **Աստծու զա-վակներին՝ սովածների, աղքատների, կարիքավորների, բանտարկյալների և հիվանդների հետ:**

Աստված մեզ կանչում է, որպեսզի մենք Իրենով երջանիկ լի-նենք և ներկա ու ապագա կյանքի ապահովությունը ունենանք: Առանց Աստծու՝ կյանքը մութ է: Նրա թեքի տակ ապրել նշանակում է՝ հավիտենական ապահովություն ունենալ, քանի որ Նա է բոլոր

բարիքների աղբյուրը: Աստված մեզ չի ստեղծել միայն այս ժամանակավոր կյանքի համար, որ մի քանի տարիներ ապրենք, տառապենք ու մեռնելով՝ փոշիանանք: Նա Իր պատկերով ստեղծած մարդու համար մեծ ու փառավոր ապագայի ծրագրեր ունի, որոնք իր ժամանակին անպատճառ պիտի գործադրի: Մի՛ խաբվեք, գերեզմանը կյանքի վախճանը չէ: Մահը այն դուռն է, որի միջով այս կյանքից հավիտենականության պիտի անցնենք: *«Երանելի են այն մեռելները, որոնք Տիրոջով են ննջում»:* Այս է Ավետարանի պատգամը, որը հավիտյան չի փոխվում: Չխաբվենք, մեր անհավատությամբ՝ ոչ՝ Աստված Իր գոյությունից կդադարի և ոչ՝ էլ Նրա դատաստանը կվերջանա, բայց Նրան չհետևելով՝ մե՛նք կկորչենք: Հետևաբար՝ *մի՛շտ աղոթեցեք:* Ամեն: